ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1951 *Общественные науки*

ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1950 թ. դեկտեմբերի 26-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Պատմության Ինստիտուտի Գիտական խորհրդի նիստ։

Նիստում լսվեց Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի ավագ գիտական աշխատող ընկ. Երվանդ Խալեյանի և Մանկավարժական Ինստիտուտի դասախոս ընկ. Վահան Իսկանյանի դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունը։ Ընկ. Ե. Խալեյանի դիսերտացիայի թեման էր «Պրոլետարիատի կռիվը 1903—1905 թվերին»։

Դիսերտանտ Ե. Խալեյանի պաշտոնական օպոնենտներ պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վ. Պարսամյանը և պատմ. դիտ. թեկնածու Ա. Հակոբյանն իրենց ելույթներում նշեցին ընկ. Ե. Խալեյանի դիսերտացիայի կարևորությունը, արդիականությունը և դիսերտացիայի մի շարք առավելությունները, դիսերտանտի լավ իրազեկությունը այդ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններին, պարտիայի պատմությանը, որը և հնարավորություն է տվել նրան հաղթահարելու այդ պատասխանատու թեման։

Օպոնենտներից հետո ելույթ ունեցան պատմական գիտությունների թեկնածու ընկ. Վ. Ավետիսյանը և ֆիլոլ. դիտ. թեկնածու Մ. Հասրաթյանը, որոնք նույնպես բարձր գնահատեցին ընկ. Խալեյանի դիսերտացիոն աշխատանքը։

Ապա կարդացվեց պատմ. գիտ. թեկնածու ընկ. Խ. Բարսեղյանի գրավոր կարծիքը։

Գիտական խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ ընկ. Ե. Խալեյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Ընկ. Վ. Իսկանյանի դիսերտացիայի թեման էր «Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները 10-րդ դարի երկրորդ կեսից մինչև 11-րդ դարի վերջը»։

Պաշտոնական օպոնենտներ փիլիսոփայական գիտութ. դոկտոր Վ. Ջալոյանը և պատմ. գիտ. թեկնածու Լ. Խաչիկյանը իրենց ելույթներում նշեցին դիսերտանտի շնորհալի աշխատանքը, այդպիսի մի դժվարին և չլուսաբանված ժամանակաշրջանի քաղաքական պատմությունը տալու ուղղությամբ։ Օպոնենտները նշեցին մի քանի թերություններ, որոնց վերացումն անհրաժեշտ համարվեց։

Դիսերտացիայի պաշտպանության ընթացքում ծավալված աշխույժ մտքերի փոխանակությանը մասնակցեցին պատմ. գիտ. թեկնածու Բ. Առաքելյանը և ֆիլոլ. գիտ. թեկնածու Մ. Հասրաթյանը։

Գիտական խորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ ընկ. Վ. Իսկանյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

* * *

1950 թ. դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի և Լեզվի Ինստիտուտի միացյալ գիտական խորհրդի նիստը, որտեղ լսվեց Ս. Աղաբաբյանի և Խ. Գյուլնազարյանի դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունը։

Ս. Աղաբաբյանի դիսերտացիոն աշխատանքի թեման էր «Կոլխոզային դյուզի արտացոլումը Ն. Ջարյանի ստեղծագործության մեջ», իսկ Խ. Գյուլնազարյանի թեման էր «Հայրենական պատերազմի արտացոլումը սովետական գեղարվեստական արձակ գրականության մեջ»։ Ընկ. Ս. Աղաբաբյանի պաշտոնական օպոնենտներն էին դոկտոր-պրոֆեսոր Մ. Մկրյանը և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Մուրադյանը։ Ընկ. Խ. Գյուլնազարյանի պաշտոնական օպոնենտներն էին պրոֆեսոր Հ. Մելիքյանը և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Բազյանը։

Միացյալ գիտական խորհուրդը բարձր գնահատելով երկու դիսերտանտների կատարած աշխատանքը ընկ. ընկ. Սուրեն Աղաբաբյանին և Խաչակ Գյուլնազարյանին շնորհեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ